ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

0018, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 23/1; հեռ. 547919 ; www.court.am

ԴԴ17Ե- 27297

«10» 10 2012թ.

ԵԿԴ/0148/11/12
10.10.2012թ.

Բողոքաբեր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցին

Ուղարկվում է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2012թ. հոկտեմբերի 08-ին կայացված որոշումը:

Կից՝ որոշումը՝ «5» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր
իրավասության առաջին ատյանի դատարանը
հետևյալ կազմով

նախագահող դատավոր՝ Մ. Մարտիրոսյան,
քարտուղար՝ Է. Մկրտչյան,

մասնակցությամբ՝
բողոքաբեր Ս. Սաքունցի,

Հայաստանի Հանրապետության /այսուհետ՝ ՀՀ/
հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի
/այսուհետ՝ ՀԿԳ/ քննիչ Գ. Հովակիմյանի,

2012թ. հոկտեմբերի 08-ին, դատարանում, դռնբաց դատական նիստում քննության առնելով բողոքաբեր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի 14.09.2012թ. բողոքը, որով խնդրել է վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012թ. օգոստոսի 24-ին կայացրած որոշումը և պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը 2012թ. օգոստոսի 31-ին ներկայացված դիմում-բողոքի վերաբերյալ որոշում կայացնել,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

2012թ. օգոստոսի 18-ին, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցը, կատարված հանցագործության մասին հաղորդումով դիմել է ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին՝ նշելով, որ 2012թ. օգոստոսի 18-ին իրենց կազմակերպություն է դիմել Վանաձոր քաղաքի բնակիչ Նարեկ Ափինյանը և հայտնել, որ 2012թ. օգոստոսի 17-ին բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժին, որտեղ ոստիկանության աշխատակիցներն իր նկատմամբ դրսևորել են անհարգալից վերաբերմունք, շուրջ տաս անգամ ձեռքով հարվածել են գլխին ու պարանոցին և հարկադրել են բացատրություն տալ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի 2012թ. օգոստոսի 24 որոշմամբ, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի վերոհիշյալ հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոհիշյալ որոշումն Ա. Սաքունցի կողմից 31.08.2012թ. բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հ. Հարությունյանի 2012թ. սեպտեմբերի 05-ի որոշմամբ բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի կողմից, 14.09.2012թ. բողոք է ներկայացվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որով խնդրել է վերացնել ՀՀ

հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012թ. օգոստոսի 24-ին կայացրած որոշումը և պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը 2012թ. օգոստոսի 31-ին ներկայացված դիմում-բողոքի վերաբերյալ որոշում կայացնել:

2. Բողոքի հիմքերն ու հիմնավորումները

Բողոքաբերը նշել է, որ 2012թ. օգոստոսի 17-ին ոստիկանության աշխատակիցները Նարեկ Ափինյանին իր աշխատանքի վայրից՝ «Պանտեռա» գիշերային ակումբից, երեկոյան ժամը 23:30-ից 00:00-ի սահմաններում բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժին: Նարեկ Ափինյանին տարել են ինչ-որ մեկի աշխատասենյակ, որտեղ գտնվել են ՀՀ Լոռու մարզի ոստիկանության աշխատակիցներ Արամ Ղազարյանը, Արտյուշա Հարությունյանը, Գևորգ անունով թաղամասային տեսուչ, Սպիտակ քաղաքից եկած ինչ-որ ոստիկան և Երևանից եկած ոստիկանության աշխատակից: Ի սկզբանե ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը Ն. Ափինյանի նկատմամբ եղել է անհարգալից: Ոստիկանության բաժնում նրան ասել են, որ ինքը մասնակից է եղել ինչ-որ ծեծկռտուքի և պնդել են, որ բացատրություն գրի այդ միջադեպի վերաբերյալ: Տեղյակ չլինելով միջադեպից՝ Ն. Ափինյանը հրաժարվել է բացատրություն տալուց և հայտնել է, որ ինքը տեղեկություններ չունի, որից հետո ոստիկանության աշխատակիցները նրա հետ սկսել են հայհոյանքներով և սպառնալիքներով խոսել: Քանի որ ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը Ն. Ափինյանի նկատմամբ, ըստ իրեն եղել է «անբարոյական», նա ցանկացել է իր հեռախոսից զանգահարել, որպեսզի օգտվի փաստաբան ունենալու իր իրավունքից և հարցաքննությանը ներկա լինի փաստաբանը, սակայն նրան արգելել են զանգահարել և վերստին ստիպել են բացատրություն գրել: Ն. Ափինյանը հրաժարվել է՝ ասելով, որ բացատրություն կգրի միայն իր փաստաբանի ներկայությամբ: Ոստիկանության աշխատակիցները պնդել են, որ Ն. Ափինյանը դրա իրավունքը չունի և պարտավոր է բացատրություն գրել, հակառակ դեպքում նրան չեն թույլատրի դուրս գալ ոստիկանության բաժնից:

Ամբողջ հարցաքննության ընթացքում, ոստիկանության տարբեր աշխատակիցներ հերթով մտել են աշխատասենյակ և հարցրել՝ «ինչ ա էղել, ոնց ա էղել», իսկ Ն. Ափինյանը պատասխանել է, որ ինքը ոչնչից տեղյակ չէ: Ոստիկանության աշխատակիցները նրան սպառնացել են՝ ասելով «բա պատմի, խի ես ստիպում, որ մենք քո հետ վատ վարվենք, երդում կեր, որ չես խաբում»: Տվյալ ժամանակահատվածում աշխատասենյակ է մտել թաղամասային տեսուչ Գևորգը, բռնել է Ն. Ափինյանի ձեռքից և ասել, որ «խի ես տղեքին խաբում, գողական ես գնում»: Ոստիկանության բաժնում գտնվելու ընթացքում, բաժնի մի շարք աշխատակիցներ մտել են այդ աշխատասենյակ և Ն. Ափինյանին դիմել են հայհոյանքներով և ասել են՝ «խի ես խաբում, տղեքին ճիշտն ասա»:

Արամ Ղազարյանը նստած է եղել Ն. Ափինյանի կողքին և մոտավորապես 10 անգամ, անընդհատ ձեռքով հարվածել է Ն. Ափինյանի գլխին և պարանոցին: Նարեկ Ափինյանին ստիպել են երդվել, որ այդ ամենի հետ կապ չունի և սեռական բնույթի հայհոյանքներ են տվել: Ն. Ափինյանին ասել են՝ «քո վդից երևումա, որ բեսամտ կայֆարիկ ես, մեզ մի խաբի, քֆուր կեր, որ մեզ մի բառ չես խաբել»: Երևանից եկած քննիչը Ն. Ափինյանին ասել է, որ «տաբուրետկեն գլխիդ կջարդեմ և կարողա քեզ բռնաբարեմ» և հայտնել է, որ նա շատերի հետ է այդպես վարվել, ովքեր իրեն խաբել են, իսկ Արամ Ղազարյանն ասել է՝ «կարողա քեզ քաշեմ ոտերիս տակ այ ճիճու»:

Ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունները, Ն. Ափինյանի նկատմամբ կիրառված հոգեբանական և ֆիզիկական բռնությունները, ճնշումները, անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը տևել է 2012թ. օգոստոսի 17-ի ժամը 23:30-ի սահմաններից մինչև 2012թ. օգոստոսի 18-ի ժամը 05:00-ը:

Չդիմանալով ճնշումներին՝ Ն. Ափինյանը բացատրություն է գրել և ոստիկանության աշխատակիցները նախօրոք ճշտելով նրա բջջային հոռախոսահամարը՝ ժամը 05:00-ի սահմաններում նրան թույլատրել են դուրս գալ ոստիկանությունից:

2012թ. օգոստոսի 18-ին Ն. Ափինյանն իր իրավունքների պաշտպանության համար դիմել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ:

2012թ. օգոստոսի 18-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, իսկ դրա պատճենը՝ ՀՀ գլխավոր դատախազություն:

2012թ. օգոստոսի 22-ին, ժամը 17:30-ից 18:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի քիմիական գործարանի այգու մոտ, Ն. Ափինյանին է մոտեցել Արամ Ղազարյանը և 2012թ. օգոստոսի 17-ին, ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնում նրա նկատմամբ խմբակային խոշտանգումներ և հոգեբանական ճնշումներ գործադրելու կապակցությամբ Ն. Ափինյանից ներողություն է խնդրել՝ հայտնելով, որ զղջում է իրենց կատարած գործողությունների համար և խնդրել է, որ հետ վերցնի ներկայացված բողոքը:

Նույն օրը՝ 2012թ. օգոստոսի 22-ին, երեկոյան ժամը 20:00-ի սահմաններում, Ն.Ափինյանին զանգահարել է ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գորիկ Հովակիմյանը և կանչել է Լոռու մարզի դատախազություն, որտեղ քննիչի թելադրմամբ Ն. Ափինյանը գրել է բացատրություն այն մասին, որ ինքը բողոք չունի և ոստիկանությունում իր նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնություններ չեն գործադրվել:

2012թ. օգոստոսի 23-ին Ն. Ափինյանը դիմում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ հայտնելով, որ 2012թ. օգոստոսի 22-ին տրված բացատրությունն ինքը գրել է ճնշումների ազդեցության ներքո և խնդրել է ընթացք տալ 2012թ. օգոստոսի 18-ին կազմակերպության կողմից ուղարկված հաղորդմանը:

2012թ. օգոստոսի 28-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ստացվել է պատասխան գրություն հետևյալ բովանդակությամբ՝ «Ստացված հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է և այդ մասին արդեն իսկ հայտնվել է Ձեզ»:

2012թ. օգոստոսի 25-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ Ն. Ափինյանի անվտանգությունն ապահովելու պահանջով:

2012թ. օգոստոսի 31-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ դիմումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչություն:

2012թ. օգոստոսի 28-ին Ն. Ափինյանի հայր Արմենակ Ափինյանը դիմում է ներկայացրել ՀՀ Նախագահին, ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ արդարադատության նախարարին և ամենայն հայոց կաթողիկոսին՝ պահանջելով պատժել անօրեն ոստիկաններին (մասնավորապես՝ Արամ Ղազարյանին, Արտյուշա Հարությունյանին և այլոց) և խնդրել է ապահովվել իր որդու անվտանգությունը:

2012թ. օգոստոսի 24-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանը կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2012թ. օգոստոսի 31-ին կազմակերպության կողմից դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի 2012 թ. օգոստոսի 24-ի որոշումը վերացնելու պահանջի մասին:

2012թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է պատասխան գրություն, որով հայտնվել է, որ. «...Նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, այն վերացնելու հիմքեր չկան»:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի 2012թ. օգոստոսի 24-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանությամբ՝

2012թ. օգոստոսի 17-ին, ժամը 23:30-ից 00:00-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները Ն. Ափինյանին իր աշխատանքի վայրից բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ «Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է նրա նկատմամբ քրեական

օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

2. Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին»:

Վերը նշված իրավանորմի մեկնաբանությունից ելնելով՝ կարելի է գալ այն եզրակացության, որ Ն. Ափինյանին բերման ենթարկելու գործողությունները չեն համապատասխանում օրենքով սահմանված դրույթներին այն պատճառաբանությամբ, որ Ն. Ափինյանը նախաքննության մարմնի կողմից երբեէ ծանուցում չի ստացել և նա երբևէ չի խուսափել նախաքննության մարմնի կողմից իրականացվող քննությունից:

Ավելին, 2012թ. օգոստոսի 24-ին կայացված, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ ի սպառ բացակայում են Ն. Ափինյանին ոստիկանություն բերման ենթարկելու օրինականության հարցի վերաբերյալ պատճառաբանությունները, ինչպես նաև բերման ենթարկելու վերաբերյալ որոշման առկայությունը և հիմնավորվածությունը:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 153-րդ հոդվածի համաձայն՝ «Ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը»:

Մինչդեռ, ոստիկանության աշխատակիցները Ն. Ափինյանին բերման ենթարկելիս չեն ներկայացրել անձին բերման ենթարկելու մասին որոշում, ինչպես նաև չի ներկայացվել նրա իրավունքները և պարտականությունները, խաբեությամբ նրանից առանց փաստաբանի ներկայության կորզվել են ցուցմունքներ այն դեպքում, երբ Ն. Ափինյանը պահանջել է, որպեսզի իրեն թույլ տան իր հեռախոսով զանգահարի իր փաստաբանին:

«Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի N 818-Ն որոշման թիվ 1 հավելվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մարդն իրավունք ունի սահմանափակման պահից իմանալու իր իրավունքների սահմանափակման պատճառները, հիմքերը, իր իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը:

Նույն որոշման թիվ 2 հավելվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու իրավունքը սահմանափակելիս ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը:

Տվյալ դեպքում, ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերը թվարկված խախտումներին, որոնք հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար:

Տվյալ դեպքում, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման հիմքում դրվել է Ն. Ափինյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական ճնշումներ գործադրած ոստիկանության աշխատակիցների բացատրությունները, ինչպես նաև Ն. Ափինյանի բացատրությունը, հաշվի չի առնվել Ն. Ափինյանի և նրա հայր Ա. Ափինյանի 2012թ. օգոստոսի 23-ի դիմումը՝ ուղղված ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին, որով Ն. Ափինյանը հայտնել է, թե ինչ պայմաններում է բացատրություն տվել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանի մոտ:

Գ. Հովակիմյանի կողմից կայացված որոշմամբ չի հիմնավորվել Ն. Ափինյանի նկատմամբ հոգեբանական ճնշումներ չլինելու հանգամանքը:

Կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումը վերաբերվել է հոգեբանական և ֆիզիկական ճնշումներին, նախաքննության մարմինը Ն. Ափինյանին հոգեբանական ճնշումներ գործադրելու վերաբերյալ չի նշանակել համապատասխան փորձաքննություն: Դրա փոխարեն օգտագործել է թիվ 581 դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը՝ այն դնելով քրեական գործ չհարուցելու մասին որոշման հիմքում, որը չէր կարող օգտագործվել, քանի որ Ն. Ափինյանն ի սկզբանե հայտնել է, որ ձեռքով հարվածել են իր պարանոցին ու գլխին և դա արել են իրեն նվաստացնելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188^1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձգելի դեպքերի:

Տվյալ դեպքում, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, վերը նշված իրավանորմի լույսի ներքո պատճառաբանված չէ, պատճառաբանություն առկա չէ Ն. Ափինյանի նկատմամբ գիշերը քննչական գործողություններ կատարելու մասին, որը հիմք է տալիս ենթադրելու, որ նրան երեկոյան ժամը 23:30-ի սահմաններում բերման ենթարկելը եղել է անօրինական, ինչպես նաև չի նշվում, թե Ն. Ափինյանի նկատմամբ քննչական գործողություններ կատարելուց հետո նա որ ժամին է դուրս եկել ոստիկանությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205^1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից ավելի:

Տվյալ դեպքում Ն. Ափինյանին 2012թ. օգոստոսի 17-ին, ժամը 11:30-ի սահմաններում, իր աշխատանքի վայրից տեղափոխել են Վանաձորի ոստիկանություն, տեղափոխման գործընթացը կարող էր տևել մոտավորապես 30 րոպե, այսինքն՝ Ն. Ափինյանին օգոստոսի 18-ին, ժամը 00:00-ից սկսել են հարցաքննել մինչև ժամը 05.00-ը, որը գերազանցում է վերը նշած իրավանորմով սահմանված, հարցաքննության համար նախատեսված 4 ժամը:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերը թվարկված խախտումներին, որոնք հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

2012թ. օգոստոսի 31-ին կազմակերպության կողմից դիմում-բողոք է ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի 2012թ. օգոստոսի 24-ի որոշումը վերացնելու պահանջի մասին:

Ներկայացված դիմում-բողոքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունը օրենքով սահմանված կարգով որոշում չի կայացրել, 2012թ. սեպտեմբերի 5-ին ներկայացված դիմում-բողոքին պատասխանել է գրությամբ:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ դատախազն ընդունում է որոշում, արձակում հրաման կամ կարգադրություն, ներկայացնում միջնորդագիր, տալիս ցուցում:

ՀՀ վճռաբեկ դատարանը Մյասնիկ Ավետիսյանի վերաբերյալ ԵԿԴ/0019/11/09 գործով պարզաբանել է, որ. «...եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոններն ընդհանրապես, ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները մասնավորապես: Այլ կերպ ասած, եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության»:

ՀՀ գլխավոր դատախազությունը կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքի կապակցությամբ պարտավոր էր որոշում կայացնել, ինչը չի կատարել:

Բողոքաբերը խնդրել է դատարանին վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012թ. օգոստոսի 24-ին կայացրած որոշումը և պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը 2012թ. օգոստոսի 31-ին ներկայացված դիմում-բողոքի վերաբերյալ որոշում կայացնել:

Դատական քննության ժամանակ բողոքաբերը պնդեց իր բողոքը:

3. Բողոքի դեմ ներկայացված առարկությունները

2012թ. սեպտեմբերի 26-ին դատարան է ստացվել բողոքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հ. Հարությունյանի առարկությունները, որով վերջինս հայտնել է, որ դիմողի այն պնդումները, թե ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի կողմից բողոքի քննության ընթացքում դրսևորվել է անգործություն, այն է՝ որոշում չի կայացվել և օրենքի խախտմամբ բողոքի մերժման մասին հաղորդվել է գրությամբ, չեն համապատասխանում իրականությանը և գործող օրենսդրության պահանջներին: Մասնավորապես, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահի 2012թ. օգոստոսի 18-ի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով 2012թ. օգոստոսի 24-ին որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2012թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի 2012թ. օգոստոսի 31-ի բողոքը, որով նա խնդրել է վերացնել հիշյալ որոշումը: Նշված բողոքի քննության արդյունքներով 2012թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազությունում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ և 185-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ կայացվել է բողոքը մերժելու մասին որոշում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված է, որ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատախազն այն

ստանալու պահից յոթ օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննությունը կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

Նույն օրենսգրքի 103-րդ հոդվածով նույնպես նախատեսված չէ բողոքների քննության արդյունքներով կայացված որոշումները բողոք բերած անձանց տրամադրելու պահանջ, այլ նույն հոդվածի 10-րդ մասով սահմանված է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը բողոքի վերաբերյալ ընդունում է պատճառաբանված որոշում, որի մասին տեղյակ է պահվում բողոք տված անձին:

Ի կատարումն օրենսդրական հիշյալ պահանջների՝ 2012թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի կողմից կայացվել է պատճառաբանված որոշում և նույն օրվա թիվ 12-43-12 գրությամբ բողոք բերած անձը ծանուցվել է բողոքը մերժելու և քննիչի որոշման օրինականությունը հաստատելու մասին:

Այսինքն՝ բողոքի քննարկման ընթացքում դատախազի անգործության և քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտման մասին դիմողի պնդումն անհիմն է:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի այլ փաստարկների վերաբերյալ դատախազի դիրքորոշումն արտահայտված է բողոքը մերժելու մասին 2012թ. սեպտեմբերի 5-ի որոշման մեջ:

Խնդրում է աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով բողոքը քննել իր բացակայությամբ:

4. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Լսելով բողոքաբերին, ուսումնասիրելով բողոքի վերաբերյալ ներկայացված նյութերը՝ դատարանը գտնում է, որ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ ... բացակայում է հանցագործության դեպքը.»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին: ...»:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի 18.08.2012թ. հաղորդման վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Արամ Ղազարյանը և ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Արտյուշա Հարությունյանը բացատրություններ են տվել այն մասին, որ Նարեկ Ափինյանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չեն դրսևորել, նրան չեն հայհոյել, ծեծի չեն ենթարկել: Նրանք հայտնել են նաև, որ ըստ իրենց՝ Նարեկ Ափինյանը «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական

կազմակերպությանը հավանաբար նման տեղեկություն է տվել այն պատճառով, որ կասկածի տակ դրվի Համլետ Սաղումյանի կողմից Սուրեն Բաղալյանին ծեծի ենթարկելու հանգամանքը հաստատող, իր իսկ կողմից տրված բացատրության իսկությունը:

/գ.թ. 3-6, 25-26/

Բողոքում նշված հանգամանքները հերքվել են նաև ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզային վարչության քննչական բաժնի քննիչ Տիգրան Հակոբյանի 23.08.2012թ. բացատրությամբ:

/գ.թ. 22-24/

Նյութերի նախապատրաստության ընթացքում բացատրություն է տվել նաև Նարեկ Ափինյանը և հերքել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու և իրեն ծեծի ենթարկելու հանգամանքը: Ն. Ափինյանն իր բացատրությամբ հայտնել է, որ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությանը տրված, ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, բացատրություն տալուն իրեն հարկադրելու, Արամ Ղազարյանի կողմից շուրջ 10 անգամ իր գլխին և պարանոցին հարվածելու վերաբերյալ իր տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: Նման տեղեկություններ է հայտնել, որպեսզի ուշադրություն հրավիրի իր նկատմամբ: Այդ կերպ փորձել է ոստիկաններին հավատացնել, որ ներկա չի եղել Սուրենի և Համլետի միջև ծագած վիճաբանությանը: Մտածել է, որ դրանից հետո ոստիկանության աշխատակիցներն այլևս իրեն չեն անհանգստացնի և ոստիկանության բաժին չեն հրավիրի: Հայտնել է նաև, որ իր մարմնի վրա վնասվածքներ չկան և պատրաստ է ենթարկվել դատաբժշկական փորձաքննության, որպեսզի հաստատվի այդ հանգամանքը: Խնդրել է անհետևանք թողնել իր կողմից տրված վերոհիշյալ տեղեկությունների կապակցությամբ նախապատրաստված նյութերը, քանի որ դրանք չեն համապատասխանում իրականությանը:

/գ.թ. 20-21/

Նյութերի նախապատրաստության ընթացքում, քննիչի 2012թ. օգոստոսի 22-ի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որի 23.08.2012թ. թիվ 581 եզրակացության համաձայն՝ «Քաղ-ցի Ն. Ափինյանի դատաբժշկական փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:»:

/գ.թ. 27-28/

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանը հաշվի առնելով, որ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ բացակայում է հանցագործության դեպքը, 2012թ. օգոստոսի 24-ին պատճառաբանված որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Այդ որոշումը «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի կողմից 31.08.2012թ. բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հ. Հարությունյանի 2012թ. սեպտեմբերի 05-ի որոշմամբ բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ և այդ մասին հայտնվել է բողոքաբերին: Այդ մասին ավագ դատախազ Հ. Հարությունյանը նշել է նաև բողոքի վերաբերյալ իր առարկություններում, որի օրինակը հանձնվել է բողոքաբերին: Այդ որոշման օրինակը ներկայացվել է նաև դատարանին, հրապարակվել է նաև դատական քննության ընթացքում, կցվել է բողոքի վերաբերյալ նյութերին: Այդ նյութերի պատճենները բողոքաբերը ստացել է 08.10.2012թ.-ին:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմնի կողմից, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի հաղորդման վերաբերյալ նյութեր են նախապատրաստվել և ստուգվել են հաղորդման մեջ նշված հանգամանքները, որի արդյունքում հերքվել է քրեական գործի հարուցման հիմքի առկայությունը:

Բողոքաբերի պատճառաբանությունն այն մասին, որ Ն. Ափինյանին բերման ենթարկելու գործողությունները չեն համապատասխանում օրենքով սահմանված դրույթներին՝ այն պատճառաբանությամբ, որ Ն. Ափինյանը նախաքննության մարմնի կողմից երբեք ծանուցում չի ստացել և նա երբևէ չի խուսափել նախաքննության մարմնի կողմից իրականացվող քննությունից, ոստիկանության աշխատակիցները Ն. Ափինյանին

բերման ենթարկելիս չեն ներկայացրել անձին բերման ենթարկելու մասին որոշում, ինչպես նաև չեն պարզաբանվել նրա իրավունքները և պարտականությունները՝ քրեական գործ հարուցելու առիթ և հիմք չեն հանդիսանում:

Բացի այդ, մինչև բացատրություն վերցնելը, Նարեկ Ափինյանը ծանուցվել է մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների բանավոր ծանուցման մասին, որի վերաբերյալ 18.08.2012թ., ժամը 00.30-ին կազմվել է համապատասխան արձանագրություն /գ.թ.14/:

Դատարանը գտնում է, որ բողոքարկված որոշումը կայացվել է օրենքին համապատասխան և այն վերացնելու հիմքեր առկա չեն:

Անդրադառնալով ՀՀ գլխավոր դատախազությանը 2012թ. օգոստոսի 31-ին ներկայացված դիմում-բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը պարտավորեցնելու մասին բողոքաբերի խնդրանքին, դատարանը գտնում է, որ այն նույնպես անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հ. Հարությունյանի կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ և 185-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ, 2012թ. սեպտեմբերի 05-ին կայացվել է բողոքը մերժելու մասին որոշում, որի մասին բողոքաբերը սահմանված կարգով և ժամկետում տեղեկացվել է:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, 278-րդ, 290-րդ հոդվածներով, դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքաբեր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի 14.09.2012թ. բողոքը, որով խնդրել է վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012թ. օգոստոսի 24-ին կայացրած որոշումը և պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը 2012թ. օգոստոսի 31-ին ներկայացված դիմում-բողոքի վերաբերյալ որոշում կայացնել, ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

Որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ